



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16197

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի հուլիսի 23-ի թիվ 167-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/108-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Արամայիս Մելքոնյանին (արտոնագիր թիվ 583) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**)՝ դիմելով Պալատ հայտնել է, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԱԲԴ/1867/02/15 քաղաքացիական գործով ինքը հանդիսանում է հայցվոր, իսկ փաստաբան Արամայիս Մելքոնյանը ներկայացնում է պատասխանողների շահերը:

Դիմողը հայտնել է, որ վերը նշված քաղաքացիական գործով պատասխանողների կողմից 16.05.2016թ. դատարանի գրասենյակ է մուտքագրվել դատավոր Ս. Հովսեփյանին ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն, որում նշվել է, որ դատավորն իբր հայցվորի մտերիմն է, ինչի հետ կապված էլ դատարանը բավարարել է հայցվորի կողմից ներկայացված հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը:

Դիմողը նշել է, որ 13.06.2016թ. նշանակված դատական նիստի ժամանակ պատասխանող կողմը և նրա ներկայացուցիչ, փաստաբան Արամայիս Մելքոնյան պնդել են ինքնաբացարկի վերոնշյալ միջնորդությունը:

Դիմողի պնդմամբ՝ փաստաբան Արամայիս Մելքոնյանը դատարանին հայտնել է, որ երբ ինքը զանգահարել է Դիմողին, Դիմողն իրեն ասել է, որ թիվ ԵԱԲԴ/1867/02/15 քաղաքացիական գործը քննող դատավոր Ս. Հովսեփյանը Դիմողի ընկերուհին է և Դիմողի օգտին է կայացնելու թիվ ԵԱԲԴ/1867/02/15 քաղաքացիական գործով վճիռը:

Դիմողը նշել է, որ փաստաբան Արամայիս Մելքոնյանը դատական նիստի ընթացքում նման տեղեկություն հաղորդելով՝ զրպարտել է Դիմողին, քանի որ ըստ Դիմողի՝ ինքը փաստաբան Արամայիս Մելքոնյանին նման բան չի ասել:

Դիմելով Պալատ՝ փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը խնդրել է փաստաբան Արամայիս Մելքոնյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Դիմումին կից ներկայացվել է ինքնաբացարկի միջնորդության և ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման պատճենները, ինչպես նաև 13.06.2016թ. դատական նիստի ձայնագրառման կրիչը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 22.08.2016թ. թիվ 373-Ա/ԿԳ-16197 որոշմամբ փաստաբան Արամայիս Մելքոնյանի (արտոնագիր թիվ 583) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 4.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

26.08.2016թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Դավիթ Հունանյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողի կողմից 13.09.2016թ. ներկայացվել առարկություն փաստաբան Արամայիս Մելքոնյանի կողմից ներկայացրած պատասխանի դեմ, որում ըստ էության նշել է, որ Արամայիս Մելքոնյանն իրեն զանգահարել է 05.08.2016 թվականին մոտավորապես ժամը 17:00-ին և խոսակցության ժամանակ Դիմողի այն հարցին թե ինչու է նա Արաբկիրի դատարանում թիվ ԵԱՔԴ/1867/02/15 քաղաքացիական գործի քննության ժամանակ առանց ամաչելու միկրաֆոնի առջև ասել, որ դատավոր Հովսեփյան Սիման իր ընկերուհին է և վճիռն էլ իր օգտին է լինելու, վերջինս պատասխանել է, որ իր վստահորդներն են իրեն ասել, որ ինքը նման բան ասի, քանի որ եթե իրենք ասեին դատավորը չէր հավատալու, իսկ եթե ինքը ասեր դատավորը կհավատար:

Դիմողը նշել է նաև, որ հեռախոսային խոսակցության ժամանակ Պատասխանողը հայտնել է, որ իր վստահորդներն են իրեն վախեցրել, ապա հայտնել են, որ Արաբկիր դատարանում նրանք ունեն ծանոթ դատավոր և եթե դատավոր Հովսեփյանը հավատա իրեն և բացարկն ընդունի, ապա գործը կգնա իր վստահորդների ծանոթ դատավորի մոտ:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Փաստաբան Արամայիս Մելքոնյանը 16.08.2016թ. ներկայացրել է գրավոր բացատրություն, որում տեղեկություններ է հայտնել Դիմողի և իր վստահորդների միջև առկա դատական գործերի մասին, նշելով, որ փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը նպատակ է հետապնդում Արամայիս Մելքոնյանին ահաբեկելու և սպառնալիքների միջոցով ներագրելու իր եղբայրների վրա, որպեսզի հրաժարվեն իրենց հակընդդեմ հայցից:

Փաստաբան Արամայիս Մելքոնյանն իր բացատրությամբ չի ժխտել Դիմողի վկայակոչած այն փաստը, որ դատարանում ինքնաբացարկի միջնորդության ներկայացման ժամանակ հայտարարել է, որ «երբ ինքը զանգահարել է Ռուզաննա Տեր-Վարդանյանին, վերջինս ասել է, որ դատավոր Ս" Հովսեփյանն իր ընկերուհին է»:

Ըստ փաստաբան Արամայիս Մելքոնյանի՝ ինքը գործել է օրենքով, քանի որ ինքնաբացարկի միջնորդությունը նախատեսված է օրենքով, և միտում չի ունեցել վիրավորել հայցվոր Ռուզաննա Տեր-Վարդանյանին:

Փաստաբան Արամայիս Մելքոնյանը իր բացատրությամբ մատնանշել է նաև որոշ փաստարկներ, որոնք ըստ իրեն վկայում են փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանի կողմից «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» պահանջների խախտման մասին:

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:¹

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

26.10.2016թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Դավիթ Հունանյանը կազմել է եզրակացություն, որում նշել է, որ Պատասխանող Արամայիս Մելքոնյանի արարքում Կանոնագրքի 4.3 կետի պահանջների խախտման հատկանիշների առկայության փաստը կախված է նրանից՝ արդյոք Պատասխանողի կողմից դատարանին հայտնաձ տեղեկությունը կեղծ է,թե՛ ոչ:

31.10.2016թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի 27.03.2017թ. որոշմամբ կարգապահական վարույթը կասեցվել է մինչև թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործով վերջնական որոշում կայացնելը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն կարգապահական գործով և թիվ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործով ապացուցման ենթակա են միևնույն փաստական հանգամանքները:

Խորհրդի 09.07.2019թ. որոշմամբ կարգապահական վարույթը վերսկսվել է՝ հիմք ընդունելով Դիմողի կողմից 06.06.2019թ. ներկայացրած դիմումը, որում վերջինս հայտնել է, որ այն հանգամանքը, որ ԵԱՆԴ/2639/02/16 քաղաքացիական գործով առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռ (**այսուհետ նաև՝ Վճիռ**):

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2019 թվականի հուլիս 23-ին, ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ*

¹ Մինչև սույն կարգապահական վարույթի կասեցումը Պատասխանողը միջնորդել է որպես վկա հրավիրել և լսել Դիմողի եղբայրներին, որը Խորհուրդը բավարարել է: Նկատի ունենալով, որ Խորհուրդը նոր կազմով է վերսկսել սույն կարգապահական գործի քննությունը և Պատասխանողի կողմից վկայի վերաբերյալ տեղեկություններ չեն տրամադրվել, ուստի վկաներ չեն հրավիրվել:

այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Թիվ ԵԱՔԴ/1867/02/15 քաղաքացիական գործով հայցվոր է հանդիսանում փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը, իսկ պատասխանողների ներկայացուցիչ՝ Արամայի Մելքոնյանը:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ կողմերի բացատրություններով:

2. Թիվ ԵԱՔԴ/1867/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում պատասխանողներ, հակընդդեմ հայցվորներ Հրանտ Տեր-Վարդանյանի և Ռաֆայել Տեր-Վարդանյանի կողմից ստորագրված ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն է ներկայացվել դատարանին, որտեղ նշված է՝ ...թիվ ԵԱՔԴ/1867/02/15 քաղաքացիական գործով ներկայացրել ենք թվով հինգ միջնորդություններ, բնականաբար առանց հիմնավորման՝ դատավորի կողմից մերժվել են, միևնույն ժամանակ գործով հայցվորը՝ հանդիսանալով դատավորի մտերիմը, ներկայացրեց միջնորդություն՝ հայցի ապահովման համար, որը քննվող գործի հետ որևէ առնչություն չունի, իսկ դատավորը բնականաբար բավարարեց միջնորդությունը:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի և պատասխանողի բացատրություններով, դատավոր Ս. Հովսեփյանին ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդության պատճենով:

3. Արամայի Մելքոնյանը, թիվ ԵԱՔԴ/1867/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում, դատարան ներկայացնելով դատավորի ինքնաբացարկի միջնորդությունը, հայտնել է հետևյալը՝ Նախ սպառնաց, հետո էլ խոսքի մեջ ասաց՝ նա իմ ընկերն ա ու անունով նշեց դատավորին, ասաց՝ դու կտենաս ով ա հաղթելու:

Նշված փաստը հաստատվում է դատական նիստի ձայնագրման կրիչով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արամայի Մելքոնյանի (արտոնագիր 583, ստացված՝ 20.10.2006թ.) նկատմամբ 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում 5 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (4 ավարտված և 1 ընթացիկ վարույթ): Ավարտված կարգապահական վարույթներից երկուսը կարճվել է, իսկ երկուսով փաստաբան Արամայի Մելքոնյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Խորհրդի 02.06.2017թ. թիվ ԿԳ/56-Ա որոշմամբ Արամայի Մելքոնյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խսիտ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 4 ժամ լրացուցիչ վերապատրաստում՝ Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի խախտման համար: Տույժը ուժի մեջ մտած չէ՝ բողոքարկված է դատական կարգով:

Խորհրդի 26.10.2017թ. թիվ ԿԳ/96-Ա որոշմամբ Արամայի Մելքոնյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն՝ Կանոնագրքի 2.2.2, 2.2.3 և 2.6.1 ենթակետերի խախտման համար: Տույժը մարվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արամայիս Մելքոնյանի նկատմամբ Կանոնագրքի 4.3 կետի պահանջների խախտման հարկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 4.3 կետի համաձայն՝ Փաստաբանը երբեք չպետք է գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն ներկայացնի դատարանին:

Դիմողը նշել է, որ 13.06.2016թ. դատական նիստի ընթացքում փաստաբան Արամայիս Մելքոնյանը դատարանին հայտնել է, որ երբ ինքը զանգահարել է Ռուզաննա Տեր-Վարդանյանին, վերջինս ասել է, որ դատավոր Ս. Հովսեփյանն իր ընկերուհին է և իր օգտին վճիռ է կայացնելու»:

Թիվ ԵԱԲԴ/1867/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում Դատարանի 15.05.2016թ. ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման մեջ նշվել է՝ միջնորդության քննության ժամանակ հակընդդեմ հայցով հայցվորների ներկայացուցիչ Ա. Մելքոնյանը պնդեց միջնորդությունը և հայտնեց, որ միջնորդություն ներկայացնելու համար հիմք է հանդիսացել այն, որ իր հետ խոսակցության ժամանակ Ռուզաննա Տեր-Վարդանյանը հայտնել է, որ դատավորն իր ընկերուհին է, և իր օգտին վճիռ է կայացնելու:

Մինչդեռ, Դիմումին կից ներկայացված 13.06.2016թ. դատական նիստի ձայնագրառման կրիչի վերծանումից (12:26:44 րոպեից սկսած) պարզվում է, որ փաստաբան Արամայիս Մելքոնյանը դատարանին հայտնել է՝ նախ սպառնաց, հետո էլ խոսքի մեջ ասաց՝ նա իմ ընկերն ա ու անունով նշեց դատավորին, ասաց՝ դու կտենաս ով ա հաղթելու»:

Պատասխանողի կողմից Կանոնագրքի պահանջների խախտում թույլ տալու փաստը վկայակոչել և ներկայացրել է Դիմողը: Նման խախտումը կարող է իրականության մեջ օբյեկտիվորեն տեղ գտած լինել, դրանք հնարավոր են և ենթակա են ապացուցման, և համաձայն Կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի, առ այն, որ Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, ապացուցելու պարտականությունը կրում է փաստը վկայակոչած Դիմողը:

Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը, փվյալ դեպքում Դիմողը:

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգույթ Պատասխանողի:

Խորհրդի տրամադրության տակ առկա են Դիմողի ու Պատասխանողի իրարամերժ դիրքորոշումներն արտահայտող բացատրությունները և Խորհուրդը գտնում է, որ կարգապահական վարույթի ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք հաստատեն փաստաբան Արամայիս Մելքոնյանի կողմից

դատարանին գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն ներկայացրելու հանգամանքը:

Միաժամանակ Խորհուրդը հատկանշական է համարում այն հանգամանքը, որ Պատասխանողի կողմից կատարված արտահայտությունները որևէ իրավական հետևանք Դիմողի համար չեն առաջացրել, քանի որ ինքնաբացարկի միջնորդությունը մերժվել է:

Խորհուրդը արձանագրում է նաև, որ Վճռով մերժվել է Ռուզաննա Տեր-Վարդանյանի հայցն ընդդեմ Արամայիս Մելքոնյանի՝ իրեն զրպարտելու համար հրապարակայնորեն ներողություն խնդրելու, դրամական փոխհատուցման, ինչպես նաև դատական ծախսերի փոխհատուցման պահանջների մասին: Դատարանն, անդրադառնալով վերոնշյալ արտահայտության զրպարտություն լինելու հարցին, արձանագրել է, որ այն չի կարող համարվել հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող արտահայտություն: Դատարանը գտել է, որ Արամայիս Մելքոնյանի կողմից Ռուզաննա Տեր-Վարդանյանի հասցեին հնչեցված արտահայտության՝ «Նախ սպառնաց, հետո էլ խոսքի մեջ ասաց՝ նա իմ ընկերն ա ու անունով նշեց դատավորին, ասաց՝ դու կտենաս ով ա հաղթելու» և Արամայիս Մելքոնյանի կողմից իր սեփական եզրահանգումը բարձրաձայնելու միջև էական տարբերություն կա և առանց Արամայիս Մելքոնյանի եզրահանգման, գնահատողական դատողության, որով վերջինս փորձել է հիմնավորել ինքնաբացարկի միջնորդությունը, բառացի հնչեցված արտահայտությունը չէր կարող որևէ կերպ արատավորել Ռուզաննա Տեր-Վարդանյանի պատիվը, իսկ Արամայիս Մելքոնյանի սեփական կարծիքը դատավորի անաչառության վերաբերյալ որևէ ուղղակի կապ չունի Ռուզաննա Տեր-Վարդանյանի հետ, քանի որ տվյալ դեպքում թիրախը գործը քննող դատավորի հնարավոր կողմնակալությունն էր և ոչ թե փաստաբանի բարի համբավն արատավորելը: Զրպարտության սուբյեկտիվ չափանիշը ենթադրում է զրպարտող անձի մոտ տուժողի արժանապատվությունը, բարի համբավն արատավորելու դիտավորության առկայություն, այսինքն՝ զրպարտողը պետք է գիտակցի, որ իր կողմից հնչեցված արտահայտության հետևանքով արատավորվում է տուժողի բարի համբավը և պետք է ցանկանա դա: Այսինքն՝ զրպարտողի հիմնական նպատակը պետք է ուղղված լինի անձի բարի համբավն արատավորելուն, մինչդեռ Արամայիս Մելքոնյանի նպատակն ու ցանկությունն իր ինքնաբացարկի միջնորդությունը հիմնավորելն է եղել՝ առաջնորդվելով իր վստահորդների շահերով: Դատարանը չի անդրադարձել զրպարտության մյուս չափանիշներին՝ հրապարակային լինելուն և այլն, քանի որ հնչեցված փաստացի տվյալների իրականում անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու չափանիշի բացակայությունն արդեն իսկ բացառում է զրպարտության առկայությունը:

Խորհուրդը, անդրադառնալով Դիմողի կողմից ներկայացրած հեռախոսային ձայնագրությանը, արձանագրում է, որ այն չի կարող համարվել թույլատրելի ապացույց հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ փարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու

տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, **հեռախոսային խոսակցությունների**, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների **գաղտնիության իրավունք**, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:

ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի վերլուծությունը վկայում է, որ վերջինս սահմանում է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման երեք համաժամանակյա նախապայման.

ա/ օրենքով սահմանված դեպքերում,

բ/ օրենքով սահմանված կարգով,

գ/ դատարանի որոշմամբ:

Ընդ որում, ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում նշված նախապայմաններից շեղվելու որևէ իրավական հնարավորություն:

Խորհուրդն նախկինում կայացված որոշմամբ անդրադարձել է տեսագրությունների և ձայնագրությունների՝ որպես ապացույցի թույլատրելիության հարցին՝ արձանագրելով, որ *տեսագրությունների և ձայնագրությունների՝ որպես ապացույցի թույլատրելիության հարցին անդրադառնալիս շատ կարևոր է այն ենթարկել սահմանադրաիրավական գնահատման և այդ հարցի կարևորությունից ելնելով Խորհուրդը առաջնային պետք է պարզի, արդյոք Դիմողի կողմից պահպանվել են օրենքով սահմանված ընթացակարգերը, որոնց համակցությամբ այդ ապացույցը կհանդիսանար թույլատրելի: ... Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ ձայնագրության տեղեկության կարևորությունը պետք է ստորադասել անձի (տվյալ դեպքում Պատասխանողի) սահմանադրական իրավունքներին և այն չի կարող ի չիք դարձնել անձի հեռախոսային խոսակցությունների գաղտնիության սահմանադրորեն ամրագրված իրավունքը (Խորհրդի 20.07.2017թ. թիվ 69-Ա որոշում):*

Կարգի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախապարաստողը հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ են կողմի բացատրությունը, վկայի ցուցմունքը, փորձագետի ցուցմունքը, գրավոր փաստաթղթերը, իրենց ապացույցները (այդ թվում՝ լուսանկարները), ինչպես նաև **ձայնագրություններն** ու տեսագրությունները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախապարաստողը ապացույցը գնահատելիս որոշում է ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը: Վերաբերելի է այն ապացույցը, որը ավելի կամ պակաս հավանական է դարձնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Վերաբերելի ապացույցը համարվում է թույլատրելի, բացառությամբ, երբ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է

հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վերլուծելով նշված իրավանորմերը՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով ներկայացված ձայնագրությունը ձեռք է բերվել ՀՀ Սահմանադրության պահանջի խախտմամբ և այն պետք է համարել ոչ թույլատրելի ապացույց:

Պատասխանողի կողմից կողմից դատարանին գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն ներկայացրելու հանգամանքը հիմնավորող բավարար ապացույցների բացակայության պարագայում Պալատի խորհուրդը գտնում է, որ պատասխանողի նկատմամբ Կանոնագրքի Կանոնագրքի 4.3 կետի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման՝ վերջինիս կողմից նշված կետով նախատեսված խախտման կատարումն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արամայիս Մելքոնյանի (արտոնագիր թիվ 583) նկատմամբ Կանոնագրքի 4.3 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-16197 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Նելլի Հարությունյան

**23 հուլիսի 2019թ.
թիվ ԿԳ/108-Ա
ք. Երևան**